619
Ku-11

1935

30-JUL 2010

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԱՆԱՄՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

ՀՈՐԹԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հաստատված՝ ԽՍՀՄ Հողժողկոմի տեղական ՅԻԼԿՈՅԻ կողմից 1934 թ. հոկտեմբերի 7-ին).

619
Խ-11

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

18 MAR 2014

619
Ա-11

ՀՐԱՀԱՆԳ ՀՈՐԹԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հորթերի հիվանդությունների դեմ պայքարելու հիմնական մեթոդը հանդիսանում է հետևյալ պրոֆիլակտիկ միջոցառումների կիրառումը. խստորեն և սիստեմատիկ կերպով կատարել հորթերի անասնաբուժական-սանիտարական և զոոառողջապահական պահանջները՝ խնամքի՝ պահպանման և կերակրման գործում, ինչպես նաև լավագույն պայմաններ ստեղծել հորթերի և հղի կովերի համար (ծնելուց առաջ և հետո)։

34044

1. ԶՈՈԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Զոոառողջապահական միջոցառումներ ասելով հասկանում ենք այն ձեռնարկումները, որոնք լավագույն պայմաններ են ստեղծում հորթերի զարգացման համար։

1. Յուրաքանչյուր անասնապահական խորհտնտեսությունում և կոլտնտեսությունում պետք է կազմակերպվեն հատուկ ծննդաբերական բաժիններ և հորթանոցներ, որոնք պետք է լիովին ապահովեն տնտեսության կարիքը և բավարարեն զոոառողջապահական պահանջները (կու-

ՀԵՐՐԱՅԻՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻՆ ՀՍՍՀ-ՍՍՀ

բատուրա, ոդափոխություն, լույս, ջերմություն, և այլն)։

2. Նոր հորթանոցներ, գոմեր և ծննդաբերական բաժիններ կառուցելու դեպքում, անհրաժեշտ է ընտրել բարձր, չոր տեղեր, վորոնք պաշտպանված լինեն ավյալ շրջանում տիրապետող քամիներից։

Ծանոթություն.— Նկատի ունենալով, վոր վորակը հորթանոցներում ընկնում է դլխավորապես կրծի բորբոքումով (մաստիտ), աղիքների բորբոքումով, մետրիտով (սեռական երդանների հիվանդություն) հիվանդացող և բացիլ կրող կովերից՝ անհրաժեշտ է ընդհանուր հորթանոցները մեկուսացնել. վերջիններս գոմերից վոչ պակաս, քան 100 մետր հեռու պետք է լինեն։ Հորթանոցները պետք է լինեն յերկու տիպի՝ հորթանոց-պրոֆիլակտորիա՝ մինչև 10—15 տարեկան հասակ ունեցող հորթերի համար, և ընդհանուր հորթանոց՝ մնացած ավելի հասակավոր հորթերի համար։ Հիվանդ հորթերի համար պետք է կազմակերպել մեկուսարան։

3. Շենքի լույսը պետք է լինի 1:10—12 հարաբերությամբ։ Բոլոր շենքերը պետք է ապահովված լինեն հատուկ ոդափոխիչ (վենտիլյացիա) հարմարություններով։

4. Հորթանոցում ջերմաստիճանը՝ պետք է

պահել 12° Ց. վոչ ցածր, առանց տատանումների։

5. Ծննդաբերական բաժինը և հորթանոցը (պրոֆիլակտորիան) նոր կառուցելու դեպքում պետք է գտնվեն մեկ ծածկի տակ, բայց միմյանցից բաժանված լինեն տաք միջանցքով։

6. Հորթանոցի մուտքի առջև պետք է կազմակերպել մի ոժանդակ սենյակ՝ կաթ և ջուր տաքացնելու համար. այդ սենյակը պետք է ունենա առանձին բաժին՝ դեղարկղի և հորթանոցն սպասարկող անձնակազմի արտադուստի համար։

7. Հղի կովերի համար պետք է սահմանել հատուկ ուշադիր հսկողություն։ Անհրաժեշտ է խստորեն հետևել, վոր կովերին չծեծեն, վոր նրանք մեկը մյուսին չեղջրահարեն, իրար հարու չտան։

Արոտային շրջանում պետք է խուսափել հոգնեցնող տեղափոխություններից, առանձնապես խիստ վերելք ունեցող և թեք տեղերում։

Հարկավոր է նույնպես խուսափել հղի կովերին (վերջին 2—3 ամսում) ճահճային տեղերում արածացնելուց։

8. Անհրաժեշտ է հղի կովերին ամեն որ դուրս բերել մանածելու, բացառությամբ ուժեղ քամու, անձրևային և խիստ ցուրտ որերի։ Գետինը սառցով ծածկված լինելու դեպքում հղի կովերը մանածելու չպետք է հանել։

Զմեռը, կովերի հղիության վերջին 60—90 որվա ընթացքում, նրանց չի կարելի ջրելու տանել առվի կամ ջրհորի մոտ, այլ պետք է ջրել ներսում՝ մաքուր ջրով, որի ջերմաստիճանը 10° Ց. պակաս չպետք է լինի։

9. Հղի կովերը ծնելուց 10 որ առաջ պետք է փոխադրվեն ծննդաբերական բաժին, որը պետք է հատկապես այդ նպատակի համար կահավորված լինի։ Շենքը պետք է լինի լուսավոր, չոր և մաքուր։ Այնտեղ, որտեղ ծննդաբերական բաժին չկա, գոմի մի առանձին անկյունը, կամ մի մասը պետք է հատկացնել ծննդաբերության համար։

Ծանոթություն.—Ժամանակից առաջ ծննդի նշաններ (վիժում) ցույց տվող կովերը պետք է փոխադրվեն մեկուսարան։

10. Այն շենքերում, որտեղ գտնվում են հղի կովերը, պետք է սահմանել սանիտարների կամ անասնապահների ցերեկային և գիշերային հերթապահություն։

11. Ծննդաբերական բաժնում գտնվող կովերը պետք է ապահովված լինեն թարմ, չոր և հավասարապես փռած ցամքարով։ Փռած, բորբոսնած, խոնավ և կեղտոտ ցամքարը հղի կովերի համար անպետք է։

12. Հղի կովերը պետք է կերակրել լավորակ կերով և բավարար քանակությամբ՝ սիջինից վոչ պակաս գիրության մեջ պահելու համար։

13. Հղի կովերը ծնելուց 40—60 որ առաջ պետք է այլևս չկթվեն—ցամքեցվեն։

Ցամքեցնելու տևողությունը, ջահել և վատ գիրացած անասունների համար, 2 ամսից պակաս չպետք է լինի։

14. Հղի կովերին, հղիության յերկրորդ կիսում (վերջին 120 որը) կենսապահ կերից բացի, պետք է տալ որական 0,8—1,2 կգ. ուժեղ կեր։ Իսկ ջահել կովերին պետք է ավելացնել կրկնակի չափով։ Ուժեղ կերի բացակայության դեպքում հղի կովերին տրվող լրացուցիչ կերը կարելի յե ապահովել կովին տրվող խոտի նորմայի ավելացմամբ։ 300 կիլոգրամ միջին քաշ ունեցող կովին անհրաժեշտ է յուրաքանչյուր որ, հիշյալ շրջանում, տալ 10—12 կիլոգրամից վոչ պակաս միջին վորակի խոտ։ Չի կարելի հղի, թեկուզ չկթվող, կովերին միայն ծղոտով (հարդով) կերակրել։

15. Ցամքեցնելուց հետո հղի կովերին տրվող հյութալի կերի նորման կարելի յե կրճատել կիսով չափ։ Ծնելուց 10—14 որ առաջ կովին տրվելիք արմատապտուղների քանակը պետք է կրճատել մինչև 10 կգ. մեկ որվա ընթացքում, իսկ սիլոսը, ինչպես և թթու կերը (ժոմ, բարդա և այլն) կերաբաժնից պետք է հանվեն ամբողջովին։ Հղիության վերջին որերի ընթացքում անհրաժեշտ է հետևել, որ կովերի կուրծը չհի-

վանդանա, և յեթե նկատվում է կրծի ուռուցք, վորն սպառնում է բորբոքում առաջ բերել, ապա պետք է հյութալի կերերն ամբողջապես հանվեն հղի կովերին տրվելիք կերաբաժնից։ Այդ դեպքում սիլոսը և այլ հյութալի ու թթու կերերը պետք է համապատասխան նորմաներով փոխարինել լավորակ խոտով և խոտացրած կերով։

Հղի կովերին յերբեք չի կարելի տալ բորբոսնած, սառած և տաք կեր, տաքացած կանաչ խոտ, մեծ քանակով արմատապտուղների տերևներ և ծլած գետնախնձոր։

16. Հղի կովի կերաբաժնում անհրաժեշտ է ավելացնել որական 100 գրամ հանքային աղ, վորը կազմված լինի հավասար չափով վերցրած սեղանի աղի, աղացած կավճի, ֆոսֆորաթթվային կրի կամ վոսկրային ալյուրի խառնուրդից։ Հանքային աղերը տրվում են մյուս կերերի հետ խառն։

2. ՍԱՆԻՏԱՐԱՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

17. Մինչև ծննդաբերության շրջանի սկիզբը ծննդաբերական բաժինները և հորթանոցները պետք է խնամքով մաքրվեն և ախտահանվեն թարմ, հանգած կրի 20%-ային լուծույթով։

18. Ծնելուց առաջ կովի յետքը պետք է լվանալ լիզոլի 2—3%-ային լուծույթով, պոչը կապել և դրսի կողմից խնամքով հականեխել սեռական որգանները—կալիումի մանգանատի 1:1000 լուծույթով, կամ ուրիշ՝ չգրգռող ախտահանիչ նյութերով։ Ծննդից առաջ դոմի հատակը պետք է մաքուր լվանալ, ախտահանել և կովի տակը փռել առատ, մաքուր և փափուկ ցամքար։

19. Հորթն ընդունելուց առաջ ձեռքերը պետք է լվանալ, մաքրել և դեզինֆեկցիայի յենթարկել, իսկ հորթը՝ ընդունել մաքուր, չոր և փափուկ ցամքարի վրա։ Հորթի պորտալարի, վոր հաճախ ինքնիրեն է կտրվում, ծայրը հարկավոր է անմիջապես թաթախել չլուծված կրեոլինով կամ յոդով լիքը բաժակի մեջ, առանց կապելու այն։ Յեթե պորտալարն ինքնիրեն չի կտրվում, այդ դեպքում թույլատրվում է այն կտրել մաքուր, հականեխված մկրատով, փորատակից 5—8 սմ. հեռավորությամբ, վորից հետո պորտալարի ազատ ծայրը դրվում է կրեոլինով կամ յոդով լիքը բաժակի մեջ։

Ծանոթություն. — Պորտալարը թույլատրվում է կապել միայն անասնաբուժական անձնակազմին, կամ այդ նպատակով առանձնապես պատրաստված անասնաբուժական սանիտարներին։

20. Նորածին հորթին պետք է ցամաքեցնել մաքուր, փափուկ սրբիչով։ Հորթի բերանը, քթի խոռոչներն ու ականջները պետք է մաքրել բորաթթվի (կարբոլկա) մեջ թրջած, մաքուր թան-

գիֆով, և անմիջապես տանել հորթանոց – պրոֆիլակտորիա։

21. Ծնելուց հետո կովը պետք է ջրել, տալով նրան կես դույլ գոլ ջուր, և 3—4 ժամից հետո կերակրել լավորակ խոտով։ Նորածին կովին վոչ մի դեպքում չի կարելի տանել առվի կամ ջրհորի մոտ ջրելու, այլ նրան պետք է ջրել ներսում և այնպիսի ջրով, վորի ջերմաստիճանը հավասար լինի ծննդաբերական բաժնի ջերմաստիճանին։ Կովը ծննդաբերական բաժնից ընդհանուր գոմը կարելի յե փոխադրել միայն սեռական անցքերը լիովին մաքրվելուց հետո։

22. Հորթանոց - պրոֆիլակտորիայում վարակի տարածվելը կանխելու նպատակով, պետք է արգելել կողմնակի մարդկանց մուտքը, իսկ սպասարկող անձնակազմը պրոֆիլակտորիա մտնելուց առաջ պետք է հագնի մաքուր գոգնոց, ձեռները լվանա հականեխիչ լուծույթով և կանգնելով հականեխիչ լուծույթով լցված տաշտակի մեջ, հականեխման յենթարկի վոտնամանները, հակառակ դեպքում պետք է հագնի հատուկ վոտնամաններ։

23. Պրոֆիլակտորիայում յուրաքանչյուր հորթ դաստիարակվում է անհատորեն՝ առանձին վանդակում կամ Եվերսի արկղերում։ Վանդակների միջև պետք է լինեն համատարած պատեր, իսկ դեպի միջանցք դարձած վանդակի պատերը պետք է ունենան ցանցեր՝ թարմ ոդ անցնելու համար։

10—15 որյա հասակ ունեցող հորթերի համար հարկավոր է պատրաստել և հագցնել հատուկ գնչկալներ (լավ՝ ուռենուց գործածը), վորոնք պետք է հանել միայն կերակրելու ժամանակ։ Պրոֆիլակտորիայում յուրաքանչյուր հորթի համար պետք է դնել առանձին դույլ։

24. Պրոֆիլակտորիան (անհատական վանդակները և Եվերսի արկղերը) պետք է ախտահանել տասն որը մեկ անգամ։ Գոգնոցները, սրբիչները և այլն պարտադիր կարգով պետք է հանեխել յեռացրած տաք ջրով, իսկ դույլերը պետք է յեռացնել սոդայի 1%-ային լուծույթի մեջ կամ լվանալ այդ տաք լուծույթով։ Հորթանոցի մուտքի առաջ պետք է դրվեն բորաթթվի կամ կրիոլինի 3% լուծույթով լիքը տաշտեր՝ վոտնամաններն ախտահանելու համար։

25. Հորթի տակ պետք է միշտ փռած լինի լավորակ ծղոտի չոր ցամքար, վորը պետք է փոխել որական վոչ պակաս մեկ անգամ։

26. Կովի կաթի միջոցով վարակի տարածվելը կանխելու նպատակով, կթելուց առաջ, պետք է լավ լվանալ և մաքուր սրբիչով շփել, չորացնել կուրծը։ Կաթի առաջին 2—3 շիթերը պետք է կթել հատուկ ամանի մեջ, վորն արգելվում է հորթերին խմեցնել։

27. Կովերը կթելուց և հորթերին կերակրելուց առաջ ձեռքերը պետք է մաքուր լվանալ։

Կաթը խմելուց հետո անհրաժեշտ է մաքրել հորթերի դունչը՝ հատկապես այդ նպատակի համար պահվող սրբիչներով (յուրաքանչյուր հորթի համար պետք է ունենալ առանձին սրբիչ)։ Հորթերին կաթ խմեցնող բանվորների հագուստը պետք է մաքուր լինի։

28. Յուրաքանչյուր հորթ պետք է պրոֆիլակտորիայում ՄՆա 10—15 որ և այդ ժամանակամիջոցում կերակրվի իր մոր կաթով։

29. Նորածին հորթին—ծնվելուց 2—3 ժամ հետո—պետք է խմեցնել նոր կթած դալ (38 Յ. ջերմությամբ)։ Հետագայում հորթերը դալով կերակրվում են օրական 4—5 անգամ, հավասար ժամանակամիջոցներով։ Տասօրական հասակից հորթերին պետք է աստիճանաբար սովորեցնել օրական յերեք անգամ կերակրվելու։ Կաթ խմելու ժամանակ հորթին թույլ չպետք է տալ, վոր ամբողջ կաթը վիանդամից կլանի. անհրաժեշտ է խմելու ժամանակ 3—4 անգամ ընդհատել, յուրաքանչյուր ընդհատման ժամանակ տալով նրան գոնե մեկ րոպե հանգիստ։ Հորթերին պետք է խմեցնել թարմ և մաքուր կաթ. թթված ու կեղտոտված կաթ խմեցնելն արգելվում է։

30. Յերբ պակասեցվում է հորթերի կաթի նորման (մոտավորապես 20 որյա հասակից), այդ ժամանակ նրանց կարելի յե տալ մաքուր և քիչ տաքացրած ջուր։ Ջուրը պետք է տալ կաթից

4 խտացրած կերից առանձին, ուժեղ կեր տալուց մի ժամ հետո։

31. Պրոֆիլակտորիայում հիվանդություններ առաջանալու դեպքում, հազացող, լուծ ունեցող, պառկող, կերից հրաժարվող հորթերը, յերբ տաքությունը 40°-Յ. բարձր է, իսկույն պետք է փոխադրել մեկուսարան, իսկ վանդակները (շարժական) և Եվերսի արկղերը պետք է մաքուր ախտահանել, յեռացնել, լվանալ ու չորացնել, դրսում բացոթյա։

32. Պրոֆիլակտորիայում վարակիչ հիվանդության հայտաբերման դեպքում, այնտեղ հետագայում չի թույլատրվում նորածին հորթեր փոխադրել։

33. Յերկշաբաթյա հասակի հասնելուց հետո, հորթերը պրոֆիլակտորիայից պետք է փոխադրել այն ընդհանուր հորթանոցները, վորոնք հատկապես հարմարեցված են մեծահասակ (մինչև 5—6 ամսական) հորթերի համար։ Հորթանոցներում հորթերը պահվում են առանձին-առանձին վանդակներում մինչև 1 ամիս։ Մի ամսից բարձր, $1^1/_2$ ամսականները պահվում են խմբերով, բայց մեկ արկղում չորս հատից վոչ ավելի։ Հորթերը խմբավորվում են ըստ հասակի և, մոտավորապես ըստ կենդանի քաշի։

34. Հորթանոցներում պետք է պահպանվի մշտական մաքրություն, վորի համար անհրաժեշտ է.

ա) Թրիքն ու կեղտոտված ցամքարը դուրս տանել որը 2 անգամ.

բ) Հանանավոր լվանալ վանդակների կեղտոտված պատերը, աղբաջրատար առվակները մաքրել կեղտից և լվանալ.

գ) պարբերաբար սպիտակացնել հորթանոցի վանդակները, առնվազն տասն որը մեկ անգամ.

դ) հորթերին ամեն որ պետք է մաքրել խոզանակով և մարմնի կեղտոտված մասերը լվանալ տաք ջրով, վորից հետո անպայման շփել մինչև չորանալը։

35. Ամառը, վորքան հնարավոր է, հորթերը բաց ողում շատ պետք է պահել։ Նրանց մանածելու համար հարկավոր է պատրաստել հատուկ փարախներ և արոտատեղեր։ Ցմեռ ժամանակ հորթերին տաստրական հատակից պետք է անպայման մանածել լայն, ազատ փարախում։ Հորթերին պետք է մանածել սովորեցնել ստիճանաբար, սկսած 15 բոպեյից՝ հասցնելով մինչև 2 ժամ (որական)։

10° Ց. ցրտի, վատ յեղանակի և քամիների ժամանակ հորթերին չի կարելի դուրս բերել մանածելու։ Պետք է հետեվել, վոր մանածելու դուրս բերելիս հորթերը մեկ տեղ չկանգնեն, այլ ամբողջ ժամանակ շարժման մեջ լինեն։

36. Հորթանոցում հիվանդություններ առաջանալու դեպքում, անհրաժեշտ է ամենից առաջ

հիվանդ հորթերին առանձնացնել առողջներից և տեղափոխել մեկուսարան, վորը պետք է նախորոք լավ մաքրված և հիմովին ախտահանված լինի։ Հիվանդ անասունները մեկուսարան տեղափոխելուց հետո, անհրաժեշտ է վարակված տեղը լավ մաքրել, ախտահանել և պատերը կրով սպիտակացնել։

37. Հորթերի հիվանդության պատճառները հայտաբերելու համար (վորից կախում ունի և առաջացած վարակիչ հիվանդության արագ վերացումը), հորթերի հիվանդացման (կամ անկման) բոլոր դեպքերը պետք է արագ և ճիշտ կերպով ախտորոշվեն (դիագնոստիկա)։ Տնտեսության վարչությունը պարտավոր է հորթերի հիվանդացման բոլոր դեպքերի մասին իր ժամանակին հայտնել տնտեսությունն սպասարկող անասնաբուժական անձնակազմին և շրջհողբաժնին։

38. Հորթերի հիվանդությունների վերացման համար, անասնաբուժը կամ անասնաբուժակը պետք է ստուգի տնտեսության մեջ, ինչպես հորթերի, այնպես էլ նրանց մայր-կովերի խնամքը, պահպանումը, ճիշտ կերակրումը (ծծելուց առաջ), ինչպես նաև հետևի շենքերի լավ մաքրելուն ու ախտահանմանը։ Նա պետք է սահմանի տեղական պայմաններին, տարվա յեղանակին համապատասխան անասնաբուժական-սանիտարական ռեժիմ և հետևի նրա կատարմանը։

39. Հորթերի անկման և հիվանդության պատճառների շուտափութ ճշտորոշման նպատակով, ամեն մի սատկած հորթից պետք է նյութ (զանազան օրգաններից) ուղարկել մանրեաբանական լաբորատորիա՝ հետազոտության համար։

40. Մանրեաբանական հետազոտություն կատարելու համար հարկավոր է լաբորատորիա ուղարկել կամ հորթի ամբողջ դիակը (լաբորատորիայի մոտիկության դեպքում մարդու միջոցով) կամ ներքին օրգանները՝ սիրտը, թոքերը չփնասված լեղապարկով լյարդը, փայծաղը, վոսկորը, մեզենտերյալ գեղձերը, և այլն։

Նյութի ուղարկման դեպքում պարտադիր կերպով կցվում է կլինիկական նշանների ժամանակ նկարագիրը և հիվանդության ընթացքը, ինչպես նաև ցույց է տրվում հորթի համարը, անունը, հասակը, պատկանելությունը, և այլն։

41. Հորթերն ուժեղ փորլուծով ծանր հիվանդանալու դեպքում, հանձնարարվում է կիսով չափ կրճատել տրվող կաթի նորման, կամ այն փոխարինել դալով։ Բացի այդ, ամեն որ տալ յերիցուկի խաշուկ (տավար), վարսակի կամ կտավհատի սերմ (1:20 ջուր), գերչակի ձեթ (մեկ անգամ) և կլիզմա դնել։

42. Վորպես դիետային սնունդ և բուժման միջոց հանձնարարվում է դարու խաշուկ, դարու կամ վարսակի խյուս (կաշա), տուխտի արմատից պատրաստած խաշուկ։ Ընդ վորում այդ միջոցները տրվում են ինքնստինքյան, կամ ըստ անհատնաբուժի ցուցումի, նրանց վրա ավելացնելով ափիոնի լուծույթ, տանին, տանոֆորմ և տանալբին։ Բացի այդ, ոգտակար կլինի կերին ավելացնել կավիճ կամ ածխաթթվային մագնեզիում։ Կարելի յե ոգտվել (ըստ անհատնաբուժի ցուցումի) զանազան ախտահանիչ միջոցներով, ինչպես որինակ, տանինի հետ խառնած սալիցիլյան նատրով, տանոֆորմով, կսերոֆորմով, նաֆտալինով և այլն։

43. Հանձնարարվում է նաև կատարել հիվանդ հորթերի շփում սպիրտային լուծույթներով և փորը փաթաթել տաք, փափուկ շորով։ Ընդհանուր թուլության դեպքում հանձնարարվում է կաշվի տակ սրսկել կոֆեյին կամ քաֆուրի յուղ (անհատնաբուժի կամ անհատնաբուժակի միջոցով)։

44. Տնտեսության մեջ պարատիֆ կամ սպիտակ փորլուծ հիվանդություններ հայտաբերելու դեպքում պետք է ոգտագործել շիճուկ (պարատիֆի և սպիտակ փորլուծի դեմ) և դործածել ֆորմալվակցինա (պարատիֆի դեմ)։

45. Սատկած հորթերի դիակներն անմիջապես հեռացնել հորթանոցից և թաղել միմիայն անհատնագերեզմանոցում, վոչ պակաս յերկու մետր խորությամբ։

Սատկած հորթերին դիահատել կամ նրանց

կաշին մաշկել կարելի է միայն անասնագերեզմանոցում, ընդ որում կաշին մաշկելուց հետո պետք է անպայման ախտահանել։

46. Վարակված հորթանոցները լավ մաքրելուց հետո պետք է ախտահանել։ Թրիքը, ցամքարը և կերի մնացորդները պետք է հեռացնել շենքից և տանել գոմաղբանոց (новозохранилище), որտեղ առնվազն յերկու ամսվա ընթացքում պետք է յենթարկել ինքնայրման։ Խիստ հիվանդ հորթերի թրիքն ու ցամքարը պետք է այրել։

Փայտե վանդակները, արկղերը, մուրները և այլ գործիքները պետք է լավ մաքրել, ախտահանել և լվանալ սոդայի յեռացրած լուծույթով կամ մոխրաջրով։

ՍԽՀՄ Հողժողկոմատի անասնաբուժական գլխավոր վարչության պետ՝ Գինզբուրգ

Անասնաբուծական գլխ. վարչության խոշոր յեղջ. անասունների բաժնի պետ՝ Պոդվոյսկի

Թ. գմ. Ս. Կարապետյան Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիտի լիազոր № Գ—56

Հրատ. № 175 պատվեր № 114 տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 1935 թ. փետրվարի 13-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. փետրվարի 16-ին

ՅԵՐԵՎԱՆ ԳՅՈՒՂՀՐԱՏԵՍ ՏՊԱՐԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան
NL0289240

294

Инструкция по борьбе с болезнями телят

(Утверждена Зам Наркома Земледелия СССР Цылко 7 X 34 г.)

Сельхозгиз 1935 Эривань

8495